**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1**
**N ԲՀԱՇՁԲ-7/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **30.09.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ն, ի դեմս կազմակերպության տնօրեն Ա. Նազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 24.06.2014թ. կնքված N ԲՀԱՇՁԲ-7/1-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

## 1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն «Սառնարանային համալիրի մոնտաժման» աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանել 2014թ. հոկտեմբերի 30-ը: Վճարումը կիրականացվի Պայմանագրով նախատեսված կարգով՝ 2014թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Աշխատանքի հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

**Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ**

**ԿԱՏԱՐՈՂ**

«Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Լազոյի 46/1 տարածք
«Զարգացման Հայկական բանկ» ԲԲԸ
Հ/Հ 1810006697940100
ՀՎՀՀ 00254399
տնօրեն

**Ա. ՆԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀՊՆՆՏԱԴ- ԲԸԱԾՁԲ-7/1» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում 2014թ-ի հունիսի 24-ին կնքված N ԲԸԱԾՁԲ-7/1-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ-ի սեպտեմբերի 30-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Փոփոխության պատճառ:*** Չնախատեսված հանգամանքների առաջացման հետևանքով Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն:

***Փոփոխության նկարագրություն:*** Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն և «Սառնարանային համալիրի մոնտաժման» աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանել 2014թ. հոկտեմբերի 30-ը: Վճարումը կիրականցվի Պայմանագրով նախատեսված կարգով՝ 2014թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

***Փոփոխության հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.2 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

**Հեռախոս՝ 010-29-44-99:**

**Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:**

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**